Հովհաննես Գազանճյան, ծնվել է 1870 թ. Եվդոկիայում (Թոքատ) (Արևմտյան Հայաստան, Սեբաստիայի նահանգ): 1883-1885 թթ. իր մի քանի ընկերների հետ միասին հրատարակել է «Երախայրիք» ձեռագիր շաբաթաթերթը: 19 տարեկանում մեկնել է Կոստանդնուպոլիս իրավաբանական վարժարան ընդունվելու համար: Աշխատակցել է «Արևելք», Իզմիրի «Արևելյան Մամուլ», Վիեննայի «Հանդես ամսօրյա» թերթերին: 1899 թ. հրատարակել է «Եվդոկիո հայոց գավառաբարբառ» աշխատությունը, որի համար 1901 թ. արժանացել է Իզմիրյան մրցանակի: 1908-1910 թթ. հրատարակել է «Արդի Հայերեն լեզվի քերականություն» եռահատոր դասագիրքը: Եղել է Թոքատի գավառական ժողովի ատենապետ, ուսումնական խորհրդի անդամ: 1915 թ. մայիսին ձերբակալվել է, հունիսին՝ դաժանաբար սպանվել: Հայոց ցեղասպանության զոհ:

Գրիգոր Պարսամյան, ծնվել է Ակնի Ապուչեխ գյուղում (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ): Եղբոր՝ Ասատուր Պարսամյանի հետ տեղափոխվել է Կոստանդնուպոլիս: Զբաղվել է առևտրով: Ունեցել է երկու որդի և մեկ դուստր: Սպանվել է 1915 թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Սուրեն Գալեմյան, ծնվել է Արաբկիրի (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ) Քուշնա գյուղում: Սովորել է Պրուսայի շերամաբուծական վարժարանում, այնուհետև տեղափոխվել է Արմաշի դպրեվանք: 1909թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա: Եղել է քարոզիչ Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցում: 1910թ. Կենտրոնական վարժարանում դասավանդել է կրոնագիտություն: 1911-1915թթ. պաշտոնավարել է Բաղեշում: Նահատակվել է 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:



Դավիթ Շիրինյան, ծնվել է 1861 թ. սեբաստացիների ընտանիքում: Սովորել է Բեյրութի Ֆրանսիական համալսարանի դեղագործական բաժնում: Եվդոկիայում (Թոքատ) ունեցել է դեղատուն: 1915 թ. սպանվել է թուրքերի կողմից: Հայոց ցեղասպանության զոհ:

Անտոն Սերայտարյան, ծնվել է 1882 թ. Եվդոկիայում (Թոքատ): Սովորել է Հռոմի Լևոնյան վարժարանում: Ձեռնադրվել է վարդապետ 1905 թ.: Սպանվել է 1915 թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Աբրահամ Երևանյան, Չարսանճագ գավառից (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ): Հայոց ցեղասպանության զոհ:

Ռաֆայել Տարագճյան, ծնվել է 1891 թ. Բալու քաղաքում (Արևմտյան Հայաստան, Դիարբեքիրի նահանգ): 1914 թ. զորակոչվել է թուրքական բանակ, որոշ ժամանակ անց սպանվել: Ամուսնացած է եղել Ազնիվ Տեր Գուրգենյանի հետ, ունեցել է մեկ դուստր: Հայոց ցեղասպանության զոհ:

Արամ Վարժապետ, եղել է Մաշկերտ գյուղի (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ) Ազգային վարժարանի ուսուցիչ: Կացնահարվել է 1915 թ. թուրքերի կողմից: Հայոց ցեղասպանության զոհ:



Սամուել Քենտիկյան, ծնվել է 1867 թ. Արաբկիրում (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ): Այնթապի Կենտրոնական թուրքական քոլեջում սովորելուց հետո վերադարձել է ծծնդավայր և մեկ տարի զբաղվել է ուսուցչությամբ: Իբրև քարոզիչ պաշտոնավարել է Ռոդոսթոյում: Իզմիրի Ամերիկյան վարժարանում եղել է ուսուցիչ: 1915 թ. աքսորվել և մահացել է Կոնիայի բանտում: Ունեցել է մեկ տղա և չորս աղջիկ: Հայոց ցեղասպանության զոհ:

Պետրոս Չոլաքյան, ծնվել է 1883 թ. Հաճնում (Ադանայի նահանգ): Եղել է ոչ միայն Հաճնի, այլև ամբողջ Կիլիկիայի առաջադեմ մտավորականներից: Եղել է ուսուցիչ, երաժիշտ և դպրապետ: 1913 թ. Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի հրավերով մեկնել է Սիս՝ դպրապետ և ուսուցիչ աշխատելու համար: 1915 թ. Չոլաքյանը աքսորվել է Տեր Զոր և դաժանորեն սպանվել: Հայոց ցեղասպանության զոհ:

Արտեշես Վարժապետյան, Դատեմ գյուղի (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ) ուսյալ գործիչներից: 1913-1914 թ. դասավանդել է տեղի դպրոցում: 1915 թ. սպանվել է թուրքերի կողմից: Հայոց ցեղասպանության զոհ:

Վարդան Վարդապետ, Սասունի Ահարոնք գյուղից: 1890թ. ձեռնադրվել է կրոնավոր, զբաղեցրել է այլ պաշտոններ: Երկար տարիներ եղել է Ս. Կարապետի վանահայր: 1915թ. թուրքերի կողմից ողջ-ողջ այրվել է: Հայոց ցեղասպանության զոհ:



Ասատուր Հայթայան, ծնվել է Դատեմ գյուղում (Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ): Եղել է գյուղի առաջադեմ հասարակական գործիչներից մեկը: 1915 թ. ձերբակալվել է և չարչարանքների ենթարկվելով՝ սպանվել թուրքերի կողմից: Հայոց ցեղասպանության զոհ:

Միհրան Իսպիրյան, ծնվել է 1873 թվականին Սեբաստիայում: 1892 թվականին Կենտրոնական վարժարանում եղել է հայերեն լեզվի ուսուցիչ: Երկար տարիներ զբաղեցրել է տեսուչ-դասախոսի պաշտոնը Սեբաստիայի վարժարանում և Ազգային որբանոցում: 1915 թվականի հուլիսի 2-ին բանտարկվել է և դաժանորեն սպանվել: Հայոց ցեղասպանության զոհ:

Աղաճան Տեր Պետրոսյան, 1908-1915թթ. զբաղեցրել է Ուրֆայի քաղաքապետական խորհրդի անդամի պաշտոնը, եղել է նաև Ուրֆայի պետական դատարանի անդամ: Տարագրվել և նահատակվել է թուրքական իշխանության հրահանգով 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:



Խոսրով Տատյան, 1908-1915 թթ. զբաղեցրել է Ուրֆայի կառավարչատան գանձապահի պաշտոնը: Նահատակվել է թուրքական իշխանության հրահանգով 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Գասպար Աղա Կլուլպենկյան, ծնվել է 1835 թվականին Թալասում: Ունեցել է խոշոր ագարակ Սեբաստիայի շրջանում: 1915 թվականի տեղահանությունների և կոտորածների ժամանակ բազմաթիվ թալասցիների հետ զոհվում է նաև Գասպար Աղա Կլուլպենկյանը: Հայոց ցեղասպանության զոհ:

Ճեպրայել Իբլիքճյան, ծնունդով Կեսարիայից է, ապրել է Կ. Պոլսում: Զբաղվել է կերպասեղենի առևտրով, հիմնել է «Իբլիքճյան» վաճառատունը: 1915 թվականի ապրիլի 18-ին ձերբակալվել է և Դիարբեքիր տեղափոխվելու ճանապարհին սպանվել: Հայոց ցեղասպանության զոհ:

Հովհաննես Պալապանյան: Ավարտել է Մարզվանի քոլեջը, այնուհետև սովորել է Գլազգոյի համալսարանում: Սպանվել է 1915թ. օգոստոսի 15-ին:

Ռեբեկա Տուրսունյան, սպանվել է 1915 թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Ռուբեն Եալնըզյան, ծնվել է Ստանոզում: 1914-ին զորակոչվել է օսմանյան բանակ: Ձինաթափվել և սպանվել է 1915 թ.:

Կարապետ Մարկոսյան, ծնվել է Սթանոզում: 1914 թ. ընդունվել է վարժարան: Սպանվել է Կեսարիայում 1915 թ.:

Արշակ Թութունջյան ծնվել է Երզնկայում 1878 թ.: Եզնիկյան ուսումնարանի շրջանավարտ է: Դասավանդել է Երզնկայում, Քեմախում և Կարինում: Երկար ժամանակ քարոզչություն է կատարել Խնուսում որպես բողոքական Պատվելի: 1903-ից թղթակցել է թուրքահայ թերթերին: Հայոց ցեղասպանության զոհ:

Մինասյան Սարգիս (Արամ Աշոտ), ծնվել է 1873 թ.: Խմբագիր, բառարանագիր, հասարակական գործիչ: Ավարտել է Պարտիզակի Կենտրոնական վարժարանը: 1894-1903-ին սովորել է Ժնևում: Աշխատակցել է «Ազատամարտ» և «Դրօշակ» թերթերին: Եղել է Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի խմբագիր: 1909 թ-ից Կ. Պոլիսում զբաղվել է ուսուցչությամբ: Ազգային երեսփոխանական ժողովի անդամ էր: Հայոց ցեղասպանության զոհ:

Կարապետ Պարսամյանը ծնվել է Սեբաստիայում: Սահմանադրության հռչակումից հետո հիմնել է տպարան: Հրատարակել է «Հողդար» և «Կափիրա» թերթերը: Հայոց ցեղասպանության զոհ:



Սարգիս Բարսեղյան (Շամիլ) ծնվել է 1875-ին Գանաձակում: Մինչև 1891թ. սովորել է Գանձակի Ներսեսյան դպրոցում: Այնուհետև բարձրագույն կրթություն ստանալու համար մեկնել է Շվեյցարիա: Դաշնակցական: 1915թ. ապրիլի 24-ին ձերբակալված առաջին Դաշնակ ղեկավարների խմբի մեջ է եղել: Աքսորվել է Այաշ: Սպանվել է Անկարայի մոտակայքում:

Օննիկ-Ժիրայր (Օնիկ Սրապյան) ծնվել է Երզնկայում 1878թ.: Եղել է <<Դաշնակցություն>> կուակցության անդամ: Պարթող Զորյանի հետ միասին Օննիկ-Ժիրայր գրատուն ձեռնակությունն և Լուսաղբյուր հրատարակչությունն են հիմնադրել: 1915թ. ապրիլի 24-ին Բաղլարբաշը Իջադիյեյում ձերբակալվել է, աքսորվել Այաշ: Անկարայում սպանվել է:

Ստեփան Միսքճեան, ծնվել է Կ.Պոլսում 1852-ին: Նախնական կրթությունը ստացել է Օրթաքոյի վարժարանում, այնուհետև 1878թ. ավարտել է Կայսերական Բժշկական վարաժարանը: Հայոց ցեղասպանության զոհ:

Հրանտ Արսլանյան, ծնվել է 1886-ին: Ավարտել է Բեյրութի Ֆրանսիական բժշկական համալսարանը: Հայոց ցեղասպանության զոհ:

Գեղամ Վանիկյանը ծնվել է Վանում 1884թ-ին: Ավարտել է Երեմյան քոլեջը: 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազիդ հրապարակում կախաղան է բարձրացվել երիտթուրքերի կողմից:

Պետրոս Պէննէ (Պետրոս Մանուկյան) ծնվել է 1881թ. Խարբերդի Հուսեյնիկ գյուղաքաղաքում: Ավարտել է Եփրատ քոլեջը: Այնուհետև Թլկատինցիի Կենտրոնական վարժարանում աշխատել է որպես ուսուցիչ: 1910թ. ավարտել է Բեյրութի Ամերիկայն համալսարանի բժշկության ֆակուլտետը: Հնչակյան գործիչ: 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազիդ հրապարակում կախաղան է բարձրացվել երիտթուրքերի կողմից:

Երուխան (Երվանդ Սրմաքեշխանլյան)՝ մանկավարժ, թարգմանիչ: Ծնվել է 1870թ. Կ. Պոլսում: Սովորել է Ներսիսյան և Կեդրոնական վարժարաններում: <<Արևելք>> թերթի խմբագիր: 1910-13թթ. Ս. Խաչ ազգային վարժարանի տնօրեն: Եղել է Մեզիրեի Ազգային Կեդրոնական վարժարանի վերջին տնօրենը: Հայոց ցեղասպանության զոհ:



Գևորգ Ծայրագույն Վարդապետ Թուրյան, ծնվել է 1872թ. փետրվարի 13-ին Ռոդոսթոյում: Սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1906թ. Դորչեստրի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր: 1911-ին ձեռնադրվել է վադապետ: Դասավանդել է աստվածաբանություն և փիլիսփայություն Արմաշի դպրեվանքում: 1912-ից Տրապիզոնի առաջնորդարանի տեղապահ: Հայոց ցեղասպանության զոհ:

Եզնիկ Եպիսկ. Գալբաքչյան, ծնվել է Պոլսում 1860թ-ին: Սովորել է Գալաթասարայի վարժարանում: 1886-ին ձեռնադրվել է վադապետ, 1912-ին՝ եպիսկոպոս: Եղել է Բալուի առաջնորդը մինչև 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Խոսրով Եպիսկոպոս Բեհրիկյան, ծնվել է 1869-ին: Ձեռնադրվել է վարդապետ 1895թ.: Եղել է Կեսարիայի առաջնորդը մինչև 1915թ.: Հայոց ցեղասպանության զոհ:

Սմբատ Եպիսկոպոս Սաադեթյան, ծնվել է 1871թ. Ադաբազարում: 1895-ին ձեռնադրվել է վադապետ: Հոգևոր ծառայության մեջ է եղել Գեյվեի հայկական գյուղերում (1896) և Պոլսի Բալաթ ու Գեդիկ փաշա թաղամասերի եկեղեցիներում (1897): Ձեռնադրվել է եպիսկոպոս 1910թ.: 1898-ից մինչև 1907թ. Շապին Գարահիսարի, այնուհետև մինչև 1915թ. Կարինի առաջնորդ: Հայոց ցեղասպանության զոհ:

Լեվոն Ասլանեանը ծնվել է Խարբերդում 1867 թվականին: 1905 թվականին ավարտել է Կ.Պոլիսի բշժկական վարժարանը: Նույն թվականին հաստատվել է Տրապիզոնում, որտեղ աշխատում էր քաղաքի առողջապահական ոլորտում: Հայոց ցեղասպանության զոհ:

Լևոն Աղաբաբյան, ծնվել է 1887-ին Բաղեշում: Ավարտել է Սանասարյան վարժարանը: 1908-14թթ. Քութահիայի և Ակշեհիրի ազգային վարժարաններում ուսուցիչ, ապա տնօրեն: Մաթեմատիկայի ուցուցիչ: Քութահիայում անհատական դպրոց է բացում, որն աշխատում է երեք տարի: Եղել է «Ազատամարտի» խմբագիրը: Հայոց ցեղասպանության զոհ:



Սերովբե Նորատունկյան, ծնվել է 1884թ-ին Սղերդում: Ավարտել է Սանասարյան վարժարանը: 1903-1915թթ. եղել է թուրքերեն լեզվի ուսուցիչ: «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության անդամ: Հայոց ցեղասպանության զոհ:

Սարգիս Սուինը (Սուինգուիջյան) ծնվել է 1870թ. օգոստոսի 15-ին Բեշիքթաշում: 1892-96թթ Ծովային նախարարության թարգմանչական բաժնի և Հանրային Պարտուց Վարչության պաշտոնյա է եղել: Հայոց ցեղասպանության զոհ:

Հովհաննես Քլչյան- 37 տարեկան: Հրատարակել է մի շարք կարևոր դասագրքեր: Հնչակյան գործիչ ու նահատակ Հայկազն Պարույրի (Գրիգոր) եղբայրն է: Հովհաննես Քլչյանը նույնպես հնչական կուսակցության անդամ է: Հայոց ցեղասպանության զոհ:

Թոփչյան Ղևոնդ Հովհաննեսի, ծնվել է 1890-ին Կարմիր գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1910թ.-ից ծառայել է Օսմանյան բանակում: Հայոց ցեղասպանության զոհ:

Փափազյան Մարտիրոս ծնվել է 1882-ին Բազաբոն գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1905թթ ավարտել է Ներսեսյան վարժարանը, ուսուցիչ, 1915թ.մայիսին ձերբակալվել է: Հունիսի 11-ին սպանվել է Արածանի գետի ափին: Հայոց ցեղասպանության զոհ:

Ջեննեյան Պողոս ծնվել է 1886թ. Երից Ագարակ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1910թ. ավարտել է Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանը, 1911-1912թթ. Չմշկածագ քաղաքում վարժարանի տնօրեն է եղել: Հայոց ցեղասպանության զոհ:

Տեր Հեքիմյան Ռուբեն ծնվել է Սիսնա գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), մանկավարժ, 1907թ. Ս. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվել է քահանա: Հայոց ցեղասպանության զոհ:

Հովաննիսյան Հակոբ, ծնվել է 1890թ. Էոտեմիշ գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիրի նահանգ), բժիշկ, գրագիր, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Ֆերուխան Բարունակ, ծնվել է 1884թ. Կ.Պոլիս քաղաքում, ջութակահար, ֆինանսների նախարարության պաշտոնյա, Հայոց ցեղասպանության զոհ:

Տիրացույան Գևորգ, ծնվել է 1883թ. Իզմիր քաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիրի նահանգ), լրագրող, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Փաշայան Կարապետ, ծնվել է 1864թ. Կ.Պոլիս քաղաքում, բժիշկ, հասարակական-քաղաքական գործիչ, 1908թ.-ից Օսմանայն խորհրդարանի պատգամավոր Սվազից, 1912թ.-ից Ազգային ժողովի երեսփոխան Խարբերդից, Հայոց ցեղասպանության զոհ:

Շահպազ Բարսեղ, ծնվել է 1883թ. Կ.Պոլիս քաղաքում, հրապարակախոս-խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Տեր-Ստեփանյան Արտաշես, ծնվել է 1882թ. Գըրգաղաճ գյուղում (Օսմանյան կայսրության Իզմիրի նահանգ), մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, Դենիզլիի, Էոտեմիշի և Կարատաշի վարժարանների տեսուչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Վռամյան Արշակ (Դերձակյան Օննիկ), ծնվել է 1871թ. Կոսկո թաղամասում՝ Կ.Պոլիս, հասրական-քաղաքական գործիչ, 1908թ.-ից Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վանից, Հայոց ցեղասպանության զոհ:

Ռուբեն Սևակ (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի), ծնվել է 1885թ. Սիլիվրի գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Կ.Պոլիս քաղաքի արվարձան), բանաստեղծ, արձակագիր, բժիշկ, Հայոց ցեղասպանության զոհ:

Մաղազաճյան Օննիկ, ծնվել է 1878թ. Կ.Պոլիս քաղաքում, տպագրիչ, Գումգափուի «Առաջադիմասեր ընկերության» ատենապետ, Հայոց ցեղասպանության զոհ:

Հյորմուզ Գևորգ, ծնվել է 1868թ. Կ.Պոլիս քաղաքում, Հայոց ցեղասպանության զոհ:

Պեյազյան Էտուառ, ծնվել է 1873թ. Կ.Պոլիս քաղաքում, դեղագործ, Պրուսայի շերմաբուծական վարժարանի փոխտնօրեն, հասարակական-քաղաքական գործիչ, «Աշխատանքի տան» գանձապետ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սարյան Մարկոս Թորոսի, ծնվել է 1875թ. Սեոլյուզ գյուղում (Օսմանյան կայսրության Բրուսայի նահանգ), հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Ճեպեճյան Երվանդ Գևորգի, ծնվել է 1897թ. (Այնթապ քաղաքում Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Հայկազն Միհրդատ, ծնվել է 1864թ. Կ.Պոլսում, հասրական-քաղաքական գործիչ, ազգային երեսփոխան, Պեշիքթաշի «Ահարոնյան ակումբի» նախագահ, Հայոց ցեղասպանության զոհ:

Համբարձումյան Համբարձում, ծնվել է 1890թ. Կ.Պոլսում, խմբագիր, հրապարակախոս, Հայոց ցեղասպանության զոհ:

Գալֆայան Հարություն, ծնվել է Կ. Պոլսում, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Երանելի Իգնատիոս Եպս. Մալոյեան, ծնվել է 1869 թվականի մարտի 19-ին: 1911 թվականի հոկտեմբերի 22-ին ընտրվել է Մարդինի թեմի արքեպիսկոպոս և եպիսկոպոս է օծվել ամենապատիվ Պողոս Պետրոս ԺԳ. Թերզեան պատրիարքի ձեռամբ: Հայոց ցեղասպանության զոհ:

Չավուշյան Երվանդ, ծնվել է 1866թ. Կ.Պոլիս քաղաքում, ուսուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Բարսեղյան Գեղամ, ծնվել է 1883թ. Կ.Պոլսում, բանաստեղծ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Աղասեր Հակոբ, ծնվել է 1881թ. Կ. Պոլսում (Օսմանյան կայսրություն), մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Մովսես քահանա Ժամկոչյան Սարգսի, ծնվել է 1837թ. Այնթապ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), նահատակվել է 1915թ., Հայոց ցեղասպանության զոհ:

Քեշիշյան Վարդան Խաչենի, ծնվել է 1883թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), դեղագործ, սպանվել է 1920թ.:

Քեպապճյան Վահե, ծնվել է Երզնկա քաղաքում (Արևմտյան Հայաստան), Երզնկայի զինվորական դպրոցի սան, Հայոց ցեղասպանության զոհ:

Քեշիշյան Հմայակ Խաչենի, ծնվել է 1887թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), բժիշկ, Օսմանյան IV զորաբանակի հարյուրապետ, գնդակահարվել է 1915թ.:

Ռուպյան Էլիշա Կարապետի, ծնվել է 1862 թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), պրոֆեսոր, դասավանդել է Մարաշի աղջիկների քոլեջում, Ակադեմիայում, Կոնիայի Ճենանյան քոլեջում, Հայոց ցեղասպանության զոհ:

Տիշչեքենյան Հովսեփ, ծնվել է 1854թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), հասարակական-քաղաքական գործիչ, դատարանի անդամ, Հայոց ցեղասպանության զոհ:

Վեհունի (Գարաճայան) Հովսեփ, ծնվել է 1882 թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), 1907 թ. Տարսոնի քոլեջի շրջանավարտ, Հայոց ցեղասպանության զոհ:

Վարժապետյան Կոստան, ծնվել է 1860 թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Մեջլիս Իտարեի անդամ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սահակյան Հարություն, ծնվել է 1870-ական թթ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, դատավոր, Հայոց ցեղասպանության զոհ:

Մոմճյան քահանա Տեր Սահակ, ծնվել է 1868թ. Այնթապ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, քաղաքական-հասարակական գործիչ, որպես քահանա պաշտոնավարել է Քիլիսի Ս. Հովաննես եկեղեցում, Հայոց ցեղասպանության զոհ:

Ոսկերիչյան Սողոմոն, ծնվել է 1868թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, եղել է տնօրեն Ս. Ստեփանոսի որբանոց-կրթարանում, Հայոց ցեղասպանության զոհ:

Շահինյան Տեր Ներսես քահանա, ծնվել է 1860թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), եղել է ուսուցիչ և լուսարար Մարաշի Ս. Քառասուն մանկանց եկեղեցում, 1909-10թթ. եղել է Առաջնորդարանի քարտուղար և խորհրդական, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաճարյան Գալուստ, ծնվել է 1856թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), բժիշկ, աշխատել է Մարաշի գերմանական հիվանդանոցում, ավարտել է Այնթապի Ամերիկյան բժշկական վարժարանը, Բեյրութի Ամերիկյան համալսարանը, Հայոց ցեղասպանության զոհ:

Մարգարիտ Նալբանդյան, Մուշի ցերեկային դպրոցի դասարաններից մեկը ուսուցչուհի, (Արևմտյան Հայաստան), Հայոց ցեղասպանության զոհ:



Մումճյան Սարգիս Պողոսի, ծնվել է 1846թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Մանիկյան Թորոս, ծնվել է 1862թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Խաչիկ, ծնվել է Մուշ քաղաքի հարակիցՍիարեբ գյուղում (Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգ): Հայոց ցեղասպանության զոհ:

Կեյիկյան Գրիգոր, ծնվել է 1855թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), 25 տարի եղել է Մեջլիս Իտարեի անդամ, Հայոց ցեղասպանության զոհ:

Խրլաքյան Հակոբ Թորոսի, ծնվել է 1856թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), առևտրական, հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Ինկիլիզյան Սամվել Պողոսի, ծնվել է 1881թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), քարոզիչ, աշխատել է Քիլիսում, 1897թ. Ավարտել է Մարաշի ակադեմիան, 1902թ.՝ Այնթապի քոլեջը, 1911թ.՝ Մարաշի ճեմարանը, Հայոց ցեղասպանության զոհ:

Թյությունճյան Ծերուն, ծնվել է 1867թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), առևտրական, հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Զեյթունցյան Հակոբ Խաչերի, ծնվելէ 1884թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), փիլիսոփայության դոկտոր, ավարտել է Մարաշի աստվածաբանության ճեմարանը, Դենվերի համալսարանը (ԱՄՆ), Հայոց ցեղասպանության զոհ:

Արըգյան Հարություն, ծնվել է 1870թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), 1882-83թթ. ուսանել է Մարաշի Կենտրոնական վարժարանում, Հայոց ցեղասպանության զոհ:

Բյուրատ Սմբատ (Տեր Ղազարյանց), ծնվել է 1862թ. Զեյթուն քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), գրող, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Երանյան վերապատվելի Հակոբ Սարգսի, ծնվել է 1855թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Ավետչարանական եկեղեցու հովիվ, 1903թ. Ապրիլի 19-ից պաշտոնավարել է Բութանիայի, Կեսարիայի շրջաններում, Տարոնում: 1915-18թթ. աշխատել է Մարաշի գերմանական որբանոցում:

Գասապյան Գրիգոր, ծնվել է 1877թ. Զեյթուն քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), փաստաբան, ուսուցիչ, 1911-13թթ. եղել է թուրքերենի ուսուցիչ Մարաշի Կենտրոնական վարժարանում, թղթակցել է <<Բյուզանդիոն>> պարբերականին, Հայոց ցեղասպանության զոհ:

Յաղուպյան Խաչիկ, ծնվել է 1880թ. Զեյթուն քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, Մեջլիս իտարեի անդամ, Հայոց ցեղասպանության զոհ:

Չորպաճյան Կարապետ Տեովլեթի, ծնվել է 1853թ. Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), ուսուցիչ, Ս. Ստեփանոս եկեղեցու Ռուբինյան ընկերության հիմնադիր, Հայոց ցեղասպանության զոհ:

Տինճյան Մկրտիչ, ծնվել է 1843թ. Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), առևտրական, Ս. Ստեփանոս եկեղեցու և դպրոցի հոգաբարձության անդամ, երեսփոխան, Հայոց ցեղասպանության զոհ:

Մկրտիչ Տեր-Պետրոսյան, ծնվել է 1870թ. Ծագ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), երաժիշտ, ուսուցիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սուրսուրյան Ասքանազ, ծնվել է Հուսեյնիկ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), լուսանկարիչ, ԼԲԸՄ անդամ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սանտրճյան Ռեբեկա, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), գրող, հրապարակախոս, Հայոց ցեղասպանության զոհ:

Գալֆայդյան Արսեն, ծնվել է 1859թ. Թալաս գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), փաստաբան, Հայոց ցեղասպանության զոհ:

Սութճյան Տուտու Գևորգի, ծնվել է Զեյթուն քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Հայրիկյան Աբրահամ, ծնվել է 1870թ. Ռոդոսթո քաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), թուրքագետ, ուսուցիչ, Կ.Պոլսի բերայի «Արդի» վարժարանի տնօրեն, ազգային երեսփոխան, Հայոց ցեղասպանության զոհ:

Շուշանյան Հակոբ, ծնվել է 1873թ. Ռոդոսթո քաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սրապյան Օննիկ, ծնվել է 1878թ. Երզնկա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգ), քաղաքական-հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:



Շուշանյան Գրիգոր, ծնվել է Ռոդոսթո քաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Սերենկուլյան Վարդգես, ծնվել է 1871թ. Կարին քաղաքում (Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգ), ուսուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Համբարյան Հրանտ, ծնվել է 1894թ. Կարին քաղաքում (Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգ), բանաստեղծ, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Վաղարշակ, (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Պազպազյան Հակոբ, ծնվել է Ադաբազար քաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիթի նահանգ), հայագետ, Բրուսայի Ամերիկյան վարժարանի ուսուցիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Շահեն Ենովք, ծնվել է 1881թ. Պարտիզակ գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիթի նահանգ), դերասան, Հայոց ցեղասպանության զոհ:

Թապագճյան Միհրան, ծնվել է 1878թ. Ադաբազար քաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիթի նահանգ), ուսուցիչ, բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Զաքարյան Ներսես, ծնվել է 1883թ. Իզմիթ քաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիթի նահանգ), ուսուցիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Պերպերյան Սարգիս, ծնվել է Բալու քաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), վաճառական, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Սաթենիկ, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Տեմիրճյան Հովհաննես, ծնվել է Քելլեր գյուղում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Հարություն, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Տէօրթեոլյան Միքայել, ծնվել է Ագտազ-Մատեն գյուղում, (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Պերպերյան քահանա Տեր Հակոբ, ծնվել է Գարայաղապ գյուղում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), Պողազլյանի Ս. Աստվածածին եկեղեցու քահանա, Հայոց ցեղասպանության զոհ:

Շվլիկյան Մելքոն, ծնվել է Դաղեմ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Զաբել, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Նիկողոսյան Լևոն, ծնվել է 1870թ. (1877թ.) Անջրդի գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հոգևորական, ուսուցիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Մչիկյան Տոնապետ, ծնվել է Քեորբե գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), գյուղապետ, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Մարիամ, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Նահիկյան Խաչատուր, ծնվել է 1860թ. Հյուսեյնիկ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), աստղագետ, Խարբերդի «Եփրատ» քոլեջի պրոֆեսոր, Հայոց ցեղասպանության զոհ:

Նաջարյան Ռոքսի, ծնվել է (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Մինասյան Երեմիա, ծնվել է Բարջանջ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), ուսուցիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Շահեն Ատոմ, ծնվել է 1875թ. Ակն քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հասարակական-քաղաքական գործիչ, ազգային երեսփոխան Ակնից, Հայոց ցեղասպանության զոհ:

Նազլյան Բեռնարդինե, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Չարգճյան Անդրանիկ, ծնվել է Ադաբազար քաղաքում (Օսմանյան կայսրության Իզմիթի նահանգ), վաճառական, Հայոց ցեղասպանության զոհ:

Սութճյան Նվարդ Սեդրակի, ծնվել է Զեյթուն քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Թերճիմյան Գևորգ, ծնվել է 1886թ. Կեսարիա քաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), «Մասիս» մարմնամարզական միության ատենապետ, հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Ոսկերիչյան Եսթեր, ծնվել է Մարաշ քաղաքում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), եղել է ուսուցչուհի Սբ. Ստեփանոսի Աղջիկների վարժարանում: Հայոց ցեղասպանության զոհ:

Հարությունյան Արտաշես, ծնվել է 1973թ. Մալքարա գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), բանասեր, թարգմանիչ, հրապարակագիր, գրաքննադատ, Հայոց ցեղասպանության զոհ:

Սարգիս Տիլկյան, ծնվել է Բիթիաս գյուղում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), մահացել է 1916 թ. խիստ աշխատանքային ճամբարում՝ Պաղեստինում:

Կոզիկյան Գարեգին Կարապետի, ծնվել է 1878 թ. օգոստոսի 17-ին Բալու քաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ, ջրախեղդ է եղել 1915 թ.:

Արապյան Վռամշապուհ, ծնվել է Մալքարա գյուղաքաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Ռուբեն Զարդարյան, ծնվել է 1874 թ. Սեվերեկ գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), գրող, հրապարակախոս, ուսուցիչ, հասարակական գործիչ, <<Ազատամարտ>> օրաթերթի խմբագրապետ, Հայոց ցեղասպանության զոհ:

Պսակ Տեր-Խորենյան, ծնվել է 1882 թ., հոգևորական, ուսուցիչ, գրող Քղիի ու Խաբերդի առաջնորդ, Հայոց ցեղասպանության զոհ:

Կյուրճյան Մելքոն, ծնվել է 1859 թ. Հավավ գյուղում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), հայագետ, հրապարակախոս, հասարակական գործիչ, ազգային երեսփոխան, Հայոց ցեղասպանության զոհ:

Շուշանյան Նարինե, ծնվել է Ռոդոսթո քաղաքում (Օսմանյան կայսրության Ադրիանապոլսի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Լևոն Աթթար-Մկրեան, ծնվել է Յոզղաթ քաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), փաստաբան, Հայոց ցեղասպանության զոհ:

Գեղամ Տեր-Կարապետյան, ծնվել է 1865 թ. Խեյբիան գյուղում (Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգ), ուսուցիչ Մշո Մուրադ-Մխիթարյան վարժարանում, Օսմանյան խորհրդարանի անդամ, Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի անդամ, դաշնակցական գործիչ, գրող, թղթակից, նահատակվել է 1918 թ.:

Խարախանյան Ներսես եպսկ. Նազարեթի, ծնվել է 1847 թ. Ավրան գյուղում (Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգ), ուսուցիչ, 1909-1915 թթ. Մշո առաջնորդ, վախճանվել է բծավոր ժանտատենդից 1915 թ.:

Բենիամին Եսայան, ծնվել է 1888 թ. Յոզղաթ քաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), կոշկակար, Հայոց ցեղասպանության զոհ:

Հակոբ Քեստեքյան, ծնվել է 1875 թ. Յոզղաթ քաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ), ապուխտ և երշիկեղեն պատրաստող արհեստավոր, նահատակվել է 1915 թ. Տէր-Զորի անապատում:

Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան, ծնվել է 1871թ. Ադաբազար քաղաքում (Օսմանյան կայսրություն, Իզմիթի նահանգ), 1907թ-ից եղել է Կարինի հոգևոր առաջնորդը, 1910թ. ձեռնադրվել է եպիսկոպոս, 1915թ. Կարինում սպանվել է թուրքերի կողմից:

Աբրահամ Ճեպեճյան, ծնվել է Կեսարիա քաղաքում (Անգորայի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Միհրան Գևորգի Տամպուրաճյան, ծնվել է Ամասիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), վաճառական, Հայոց ցեղասպանության զոհ:

Եղիսաբեթ Քեստեքյան, ծնվել է 1880 թ.-ին Յոզղաթ քաղաքում (Օսմանյան կայսրության Անգորայի նահանգ) երկաթագործի ընտանիքում, նահատակվել է 1915 թ.-ի Քելլերի ջարդի ժամանակ:

Գագիկ Օզանյան, ծնվել է 1882թ. Շապին Գարահիսար քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), ուսուցիչ, 1906թ.-ից Մարզվանի Սբ. Սահակյան վարժարանի տնօրեն, հրատարակիչ: Հայոց ցեղասպանության զոհ:

Խաթուն Ռենջիլյան, ծնվել է Բիթիաս գյուղում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), 1895-99թթ. եղել է Բիթիասի եկեղեցու ակտիվ անդամ, սովամահ է եղել 1917թ.:

Մինաս Իրեքճյան, ծնվել է Ամասիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), «Ամասիա» պարբերաթերթի խմբագիր, հնչակյան գործիչ: 1915թ. կացնահարվել է թուրքերի կողմից:

Սեդրակ Զուլումյան, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), բժիշկ, Հայոց ցեղասպանության զոհ:

Արաքսիա Ճեպեճեան, ծնվել է Այնթապում (Օսմանյան կայսրության Հալեպի նահանգ), նահատակվել է Տէր-Զորում:

Արսեն Դերիկլյան, ծնվել է Տիգրանակերտ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Գևորգ Զուլումյան, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), գրող, ուսուցիչ, Հայոց ցեղասպանության զոհ:

Կարապետ Դերիկլյան, ծնվել է Տիգրանակերտ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Գայանե Ճեպեճյան, ծնվել է Կեսարիա քաղաքում (Անգորայի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Կարապետ Մոմճյան, ծնվել է Այնթապ քաղաքում (Օսմանյան կայսրություն, Կիլիկիա), Հայոց ցեղասպանության զոհ:

Վահան Նազարեթի Հյուսիսյան, ծնվել է 1877թ. Շապին Գարահիսար քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), վաճառական, ազգային գործիչ: Հայոց ցեղասպանության զոհ:

Խորեն Դերիկլյան, ծնվել է Տիգրանակերտ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Դիարբեքիրի նահանգ), Հայոց ցեղասպանության զոհ:

Ռուբեն Հեքիմյան, ծնվել է 1864թ. Ամասիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), Ամասիայի Ազգային հիվանդանոցի բժիշկ, գնդակահարվել է 1915թ.:

Օվսաննա Մոմճյան (Բաղդասարյան), ծնվել է Այնթապ քաղաքում (Օսմանյան կայսրություն, Կիլիկիա), Հայոց ցեղասպանության զոհ:

Հայկազուն Գևորգի Տամպուրաճյան, ծնվել է 1899թ. Ամասիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), հայոց ցեղասպանության զոհ:

Գևորգ Տամպուրաճյան, ծնվել է Ամասիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), վաճառական, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Նորարևյան Ահարոն, ծնվել է Սեբաստիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Գրիգոր Տելի-Ղազարյան, ծնվել է 1863թ. Սեբաստիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), ուսուցիչ, գործարանատեր, 1915թ. հուլիսի 13-ին ձերբակալվել ու սպանվել է թուրքերի կողմից:

Ռուբեն Գրիգորի Տելի-Ղազարյան, ծնվել է 1897թ. Սեբաստիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), Արամյան վարժարանի շրջանավարտ, 1915թ. հուլիսի 8-ին ձերբակալվել ու սպանվել է թուրքերի կողմից:

Հովհաննես Գրիգորի Տելի-Ղազարյան, ծնվել է 1896թ. Սեբաստիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), Արամյան վարժարանի շրջանավարտ, 1915թ. հուլիսի 8-ին ձերբակալվել ու սպանվել է թուրքերի կողմից:

Ջրասունյան Լևոն, ծնվել է Թոգատ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), վաճառական, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Ծայրագույն վարդապետ Պաթմանյան Հարություն, ծնվել է Թոզատ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Թեփեկյոզյան Օննիկ Կարապետի, ծնվել է Երեցագրակ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1915թ Մեծ Եղեռնի նահատակ:

Տյուրկերյան Տիգրան, ծնվել է 1883 Թոզատ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), ուսուցիչ, բողոքական քարոզիչ, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Փասպանյան Լևոն Գևորգի, ծնվել է Թոզատ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի նահանգ), եղել է ուսուցիչ Սանասարյան վարժարանում, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Սարքեշիշյան Գարեգին, ծնվել է Հազարի գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Մանուկյան Ավետիս, ծնվել է Հարամիկ գյուղում (Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգ), ուսուցիչ, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Զեննեյան Կարապետ, ծնվել է Երեցագրակ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Մենծոյան Հարություն, ծնվել է Դատեմ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հասարակական գործիչ, 1915թ. ձերբակալվել և չարչարանքների ենթարկվելով՝ սպանվել է թուրքերի կողմից:

Բուջիկյան Կիրակոս, ծնվել է Բերրի գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Բերիի քաղաքական ժողովի և թաղականության ատենապետ, 1915թ. ձերբակալվել և սպանվել է թուրքերի կողմից:

Գասյան Պետրոս (աշխարհիկ անունը՝ Հարություն-Զարեհ), ծնվել է 1866թ. Բինկյան գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1905թ. ձեռնադրվել է քահանա, 1909-ից ստանձնել է Ակնի առաջնորդական տեղապահի պաշտոնը, 1915թ. հունիսին սպանվել է թուրքերի կողմից:

Գապուլյան Պողոս, ծնվել է 1860թ. Ակն քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1896թ.-ից Ամերիկյան նպաստամատույցի տնօրեն, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:



Սարգիս Զաքոյան, ծնվել է մոտ. 1860թ. Խուշի գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1894թ. Սեվերեկում ձեռնադրվել է քահանա, 1915թ. ձերբակալվել և սպանվել է թուրքերի կողմից:

Պեննեյան Կարապետ (աշխարհիկ անունը՝ Համբարձում), ծնվել է 1864թ., Մալաթիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), 1905թ. Սսում ձեռնադրվել է քահանա, 1915թ. ձերբակալվել և կացնահար սպանվել է թուրքերի կողմից:

Հերոյան Հայկազ, ծնվել է Դատեմ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Մեզրեի կենտրոնական վարժարանի, ապա նաև Երզնկայի սպայական վարժարանի շրջանավարտ, Դատեմ գյուղի ուսուցիչ, 1915թ. ձերբակալվել և չարչարանքների ենթարկվելով՝ սպանվել է թուրքերի կողմից:

Ժարժաթյան Հակոբ, ծնվել է Մալաթիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), ուսուցիչ, 1915թ. բռնագաղթի ժամանակ խոշտանգվել և սպանվել է թուրքերի կողմից:

Անսուրլյան Գաբրիել, ծնվել է Մալաթիա քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Սահակյան վարժարանի ուսուցիչ, 1911-ից՝ նույն վարժարանի տնօրեն, 1915թ. ձերբակալվել և Մալաթիայի բանտում սպանվել է թուրքերի կողմից:

Գաբրիելյան Համազասպ, ծնվել է Դատեմ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), դաշնակցական գործիչ, 1915թ. ձերբակալվել և չարչարանքների ենթարկվելով՝ սպանվել է թուրքերի կողմից:

Նիկողոսյան Ասատուր, ծնվել է 1860թ. Խոզագյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հոգևորական, 1897-ից՝ Պատվելի, 1915թ. մի խումբ երևելի հայերի հետ Մնձուր գետի ափին սպանվել է թուրքերի կողմից:

Պոյաճյան Բաղդասար, ծնվել է Բերրի գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է վաճառական: 1915թ. Մնձուր գետի ափին սպանվել է թուրքերի կողմից:

Դանիելյան Գաբրիել, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), Եփրատ քոլեջի ուսուցիչ, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Թաշճյան Կարապետ, ծնվել է 1865թ. Հուսեյնիկ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է վաճառական, Հնչակյան կուսակցության անդամ, 1915թ. ձերբակալվել և չարչարանքների ենթարկվելով՝ Մեզրեռում սպանվել է թուրքերի կողմից:

Թևրիզյան Արմենակ Խաչատուրի, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), զբաղվել է շերամապահությամբ, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Թյութունճյան Միհրան, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ),եղել է լուսանկարիչ: 1915թ. խոշտանգվել և սպանվել է թուրքերի կողմից:

Մալեմեզյան Հովսեփ, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է Թուֆենքճյան վաճառատան գանձապահ, նաև Հնչակյան կուսակցության անդամ: Ձերբակալվել և սպանվել է 1915թ.:

Մանուկյան Պետրոս Թորոսի (Պեննե) ծնվել է 1881թ., Հապուսի (Հուսեյնիկ) գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է բժիշկ, նաև հնչակյան գործիչ: Ձերբակալվել և 1915թ. Կ.Պոլսում կախաղան է բարձրացվել 20 հնչակյան գործիչների հետ:

Ղազարոսյան (Թումաճանյան) Հավաս, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է վաճառական, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Ղևոնդյան Մելքոն, ծնվել է Հուսեյնիկ գյուղում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է Խարբերդի ֆրանսիական քոլեջի ավագ ուսուցիչ,նահատակվել է 1915թ.:

Ղազարոսյան Հակոբ, ծնվել է Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է վաճառական, 1915թ. սպանվել է թուրքերի կողմից:

Ղազարոսյան Նշան Հակոբի, ծնվել է 1872թ., Խարբերդ քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), եղել է վաճառական, հնչակյան գործիչ, 1915թ. ձերբակալվել է թուրքերի կողմից և նահատակվել Մեզրեի բանտում:

Աչգպաշյան Արամ (Գրիգոր) Կարապետի, ծնվել է 1867թ., Արաբկիր քաղաքում (Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգ), հնչակյան գործիչ, իրավաբան, 1915թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի Սուլթան Բայազիդ հրապարակում կախաղան է բարձրացվել թուրքերի կողմից: